



ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

Մեր ՅԱՋՈՐԴ
ԹԻՒՆ՝

ՈՒՐԲԱԹ. 16
ՄԱՅԻՍ 2003

«ԱՋԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Բ. ՏՄՐԻ

ԹԻՒՆ 1(13)

ԱՊՐԻԼ 2003

bezdlg_mezdlg@hotmail.com

ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ ԵՄ

Այսօր տարեդարձս է: Մեկ տարեկան եղայ:

Գիտեմ՝ բոլորդ ալ ուրախ էիք իմ ճնունդովս: Ես ալ ուրախ էի ձեզմով, երբ լայն ժպիտներով շուրջս հաւաքուած տեսայ ձեզ: Եւ այդ օրէն ջանք թափեցի ա՛մէն գնով գոհ պահելու ձեզ: Ընդունեցի ձեր գեղեցիկ գճանկարները, անկեղձ գրութիւնները, խաղերը եւ անոնցմով կարդարեցի «հագուստս» եւ գեղեցկացուցի ես զիս: Անշուշտ, ես ալ աշխատեցայ: Գաղտնիք մըն ալ ըսեմ. ձեզի ճանօթանալէս ետք շատ գիրքեր, թերթեր, համացանցի կայքերու լուրեր կարդացի: Որպէսզի ամէնէն հետաքրքրական լուրերը ընտրեմ, այնքան կարդացի, որ ձեր պատճառով ես ալ գիտութեամբ ու տեղեկութեամբ հարստացայ:


Նախքան կարկանդակիս առաջին մոմը փչելս՝ շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզմէ իւրաքանչիւրին, որ գուրգուրացիք վրաս, զիս սիրեցիք եւ ձեր ներկայութեամբ քաջալերեցիք, որ առաջին քայլերս հաստատ առնեմ:

Ներողամիտ թող գտնուին բոլոր անոնք, որոնք իրենց «կարդ»երէն բան մը ուղարկեցին ինձի, սակայն ես վանոնք

չգործածեցի: Մի՛ նեղանաք ինձմէ. եթէ այսպիսի դէպք պատահի, դուք անձամբ կապուեցէք հետս, որպէսզի բացատրութիւն ստանաք եւ այդ ձեւով բարեկամ մնանք:

Բարձր աստիճանի մը առաջին սանդղխամատը միայն բարձրացած եմ, տակաւին ունիմ երկար ճամբայ: Նոյն սանդղխամատին վրայ չմնալու համար աւելի ու աւելի պիտի կարդամ, ես զիս աւելի պիտի գեղեցկացնեմ եւ քիչ մըն ալ պիտի փոխիմ, որպէսզի դուք ինձի աւելի կապուիք, ձեր գրութիւններով ու գճանկարներով աւելի մասնակից դառնաք եւ մանաւանդ ձեր ընկերներն ալ քաջալերէք մասնակցելու:

Բարի՛ տարեդարձ, «Պկտիկ-Մկտիկ»:



Լայլ Անտոնեան, Բ. դասարան.
«Յարաջ» վարժարան

ԾԱՂԿԱՎԱՐԴ

Ծաղկավարդ, զրոյզավարդ, ճորճադր կամ Ծառակարդուօր:

Ծաղկավարդը կը տօնուի նշելու համար Յիսուսին երուսաղէմ մուտքը, երբ ժողովուրդը վայն դիմաւորեց ձիթենիի ծիւղերով: Բայկական սովորութեան համաձայն, Ծաղկավարդին նախորդող շաբաթ գիշեր նորապսակ երիտասարդներ եւ նշանուածներ ուռենիի նոր ձլած ծիւղերով կը վար-

ԶԱՏԻԿ Է

դարէն եկեղեցին: Ժողովուրդը նոր հագուստներով ու մոմերով կ'երթար վարդարելու ուռենիի ծիւղերը: Իսկ արարողութենէն ետք հաւատացեալները տուն կը տանէին մոմերն ու ուռենիի օրհնուած ծիւղերը, որոնք կը պահուէին՝ հաւատալով, որ անոնք յաջողութիւն եւ բախտ կը բերեն:

Ներկայիս արարողութիւնները, ծիւղերը, մոմերը եւ եկեղեցական թափօրը փոխադրուած են կիրակի օրուան:

ՄԵԾ ՊԱՅՔԻ ՎԵՐՋԻՆ ԾԱՔԱԹԸ

Մեծ պահքի վերջին Ծաբաթը Ակլատիկի վերջին փետուրը քաջելու Ծաբաթն էր: Ամէն օր տեղի կ'ունենային ձկներ եւ եկեղեցական արարողութիւններ, որոնցմէ շատերը պահուած են նաեւ այսօր: Սակայն կան փոխուած մանրամասնութիւններ,


օրինակ՝ հինգշաբթի երեկոյեան եկեղեցական արարողութեան ընթացքին եկեղեցւոյ բոլոր մոմերը կը մարէին: Չարածճի տղաք առիթէն օգտուելով՝ կը համբուրէին իրենց սիրած աղջիկները, իսկ քով քովի նստած կիներուն փէշերը իրարու կը կարէին...

Ծաբաթ օր հաւկիթ ներկելու օր էր եւ պատրաստութիւններ կը տեսնուէին յաջորդ օրուան ուրախութեան:

ԶԱՏԻԿ

Եկեղեցական Սուրբ Յարութեան տօնն է: Եկեղեցական արարողութենէն ետք կը սկսէին շնորհաւորական այցելութիւնները, խնձոյքներն ու դաշտագնացութիւնը: Բակրթախաղը եւ այլ խաղեր կը շարունակէին մինչեւ ուշ գիշեր:

Ձատիկէն մինչեւ համբարձում (40 օր) կիները կը դադրէին ձեռագործ գործելէ:



ԱՃԽԱՐԻՑ

ԱՃԽԱՐԻՑԻ ՋՈՐՍ ԿՈՂՄԵՐԷՆ

«Պատիկ – Ապտիկ» իր առաջին տարեդարձին հրաւիրեց տարբեր երկիրներ բնակող հայ փոքրիկներ, որպեսզի պատմեն, թե անոնք ինչպես կ'անցընեն իրենց օրերը: Գիրքերուն մէջ կան մեր հայրենիքէն՝ հայաստանէն ու Պարաբաղէն եկած, ինչպէս նաեւ այլ երկիրներ բնակող երեխաներ: Բնականաբար հայ երեխաներ կը բնակին նաեւ բազմաթիւ այլ երկիրներու մէջ:

Եկէք վայրկեան մը մտածենք, թե մենք ինչո՞ւ այսքան մեծ թիւերով տարտղնուած ենք աշխարհի չորս կողմը: Այս հարցումին պատասխանը այն է, թե տարիներ առաջ մեր մեծ հայրերուն ու անոնց հայրերուն մեծ մասը ջարդուեցաւ եւ մնացածը դուրս քշուեցաւ իր հայրենիքէն: Ապրիլ 1915ին սկսած հայկական Յեղասպանութենէն ետք հայձրը շատ անգամ մեծ թիւերով սկսան ապրիլ աշխարհի տարածքին:

Մեր բոլորին համար շատ կարեւոր է գտնել մեր անցեալը, արմատները, ուրկէ կու գանք եւ որոնք են մեր նախահայրերը: Ասիկա գտնելու համար մեզի շատ կ'օգնէ ընտանեկան ճառ գծելը: Իսկ երբ այսօր մենք փորձենք գծել մեր ընտանիքին ճառը, կը տեսնենք, որ շատ դիւրութեամբ կրնանք գտնել մեր, մեր քոյր – եղբայրներուն, մեր ծնողներուն ու մեծ հայրերուն նկարները: Սակայն եթէ ուզենք անելի ետ երթալ, գտնել մեր մեծ հայրերուն մեծ հայրերուն նկարներն ու անունները, շատ դժուարութիւն կ'ունենանք, որովհետեւ անոնք թուրքերուն կողմէ դուրս դրուեցան մեր պապենական հողերէն:

Գետեաբար գծենք մեր ընտանեկան ճառերը, ծանչնանք մեր պատմութիւնը, որ կարենանք ինքնավստահ կերպով նայիլ ապագային:

ԼԻԲԱՆԱՆ, Կիլիթ, 10 տարեկան

Իմ նախասիրած օրս երեքշաբթին է: Առաջին պահը հայոց պատմութիւն ունիմք: Ես շատ կը սիրեմ այս պահը, որովհետեւ շատ հաճելի կ'անցնի: Երանի թէ ամէն օր հայոց պատմութիւն ունենանք: Ահա վանաք: Բայերէնի պահն ալ կը սիրեմ, որովհետեւ իմ մայրենի լեզուս է, եւ ամէն ինչ կը հասկնամ: Նորէն վանաք, վրասանքի կ'իջնենք եւ բակը գնդակ կը խաղանք: Յետոյ պրն. Արան կը սուկէ, կը շարուինք եւ դասարան կ'ելլենք: Օ... Երգի պահը, ինչ աղուոր երգեր կը սորվինք: Եւ այսպիսով մեր օրը կը շարունակուի Ֆրանսերէնի, արաբերէնի, պարսի, թուրքերէնի եւ ֆրանսերէնի պահերով: Այս պահերը շատ երկար են: Վերջապէս վանաք կը վարնէ եւ տուն կ'երթանք: Ճաշէն ետք, յաջորդ օրուան պարտականութիւններս կ'ընեմ եւ արդէն օրը կը վերջանայ:

Ես դպրոցական օրերը շատ կը սիրեմ, անոր համար ձեզի ներկայացուցի իմ նախասիրած օրս՝ երեքշաբթին:



ՄՐԱՅԵԱԼ ՆԱԳԱՆՉՆԵՐ, նանոր, 10 տարեկան

Այսօր ես ժամը 6:45ին արթնցայ: Բազուեցայ եւ նախաճաշ չկերայ, որ հաղորդութիւն առնեմ: Ինքնաշարժին մէջ դաս ըրի, դպրոց հասայ եւ իմ դասընկերոջս հետ խաղացի: Ամէն մարդ համապատասխան փոխարէն ուզած հագուստը հագուած էր, որովհետեւ մեր Զատիկուան արձակուրդը պիտի սկսէր: Երբ դասը սկսաւ, նախ հայերէնի ուսուցչուհին եկաւ եւ հայերէն դաս ըրինք: Վերջը գացինք, որ հաղորդութիւն առնենք: Բաղորդուելէ ետք վրասանք ըրինք ու անկէ ետք դասարան գացինք: Անգլերէնի գրաւոր ունեցանք եւ շարժապատկեր դիտեցինք: Դասարանին մէջ Զատիկուան տօն-հաւաքոյթ ունեցանք մինչեւ ժամը 12:00 եւ յետոյ տուն վերադարձանք:



Այսօր մեր դպրոցը կարճ օր էր եւ կանուխ տուն գացինք, որովհետեւ Զատիկուան արձակուրդին առաջին օրն էր: Երբ տուն հասայ, համակարգիչով խաղացի: Ահա այսօրուան իմ դպրոցական առօրեաս, որ սովորականէն տարբեր էր:





ԲԱՅԱՍՏԱՆ, Ասպրամ, 10 տարեկան

Ես ճնուել եմ Սեւանի ափին ճուարած մի գողտրիկ գիւղում: Մանկութիւնս անցնում է ուրախ եւ անհոգ: Իմ առօրեան, ինչպէս մեր գիւղի մնացած դպրոցահասակ երեխաները, սկսում է վաղ առաւօտուանից: Չնայած մեծ դժուարութեամբ, բայց պարտադիր, ես շաբթուան հինգ օրը արթնանում եմ առաւօտեան ժամը 8:00ին, դպրոց գնալու համար: Դպրոց յաճախելը շատ հաճելի է ինձ համար:

Դպրոցը մեր երկրորդ տունն է, իսկ ուսուցիչները համարում են մեր երկրորդ ծնողները: Նրանք վայրանում են մեր անմիտ արարքներից, ուղղում են մեր սխալները: Միեւնոյն ժամանակ նրանք ուրախանում են մեր յաջողութիւններով: Ես սովորում եմ 5րդ դասարանում: Մինչեւ այժմ եղել եմ օրինակելի աշակերտուհի: Յոյս ունեմ, որ մնացած տարիներն էլ նոյն ձեւով կը շարունակեմ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԱՌԸ



Դարերու ընթացքին մարդը յաճախ ինք-
պինք նմանցուցած է ճառի մը: Ծառին
նման, մարդը կարելոր կապ մը ունի իր
արմատներուն հետ, որոնք շատ խորը կը
մխրճուին եւ կ'երթան դէպի անոր մեծ
հայրերը:

Ծառին նման, մեզմէ իւրաքանչիւրը ու-
նեցած է նախահայր մը, որ ճիւղաւորուած


է, բազմացած, ունեցած է զւաակներ, թոռ-
ներ, ճոռներ...

Դուն ալ փորձէ վերակազմել ընտանիքիդ
պատմութիւնը, գիտնալու համար, թէ ուր-
կէ՛ եկած են քու մեծ հայրերդ, մեծ հայրե-
րուդ մեծ հայրերը...

ԻՆՉՊԷՍ

Անշուշտ նախ եւ առաջ պէտք է
փնտռես, պրպտես, հարցնես... Ապա փոր-
ձէ հաւաքել իւրաքանչիւր անձի դիմանկարը:
Ծառդ կրնաս գծել եւ ներկել՝ աւելցնե-
լով նկարները կամ խաւաքարտներով շի-
նել՝ ներշնչուելով այս էջին մէջ ներկայա-
ւած օրինակներէն:

ՊԱՐԱԲԱՂ, Լեւոն, 10 տարեկան



Երբ ես ճնուել եմ, Պարա-
բաղում արդէն պատերազմ էր:
Ես յիշում եմ ռաբակոճումների
աղմուկը, եւ մօրս ժպտը: Նա
ինձ եւ ընկերուհուս՝ Կարին-
կային, գրկում էր եւ ժպտում:
Յետոյ նա բացատրում էր,
որ փոքրիկները ակամայ
պաշտպանութիւն են
խնդրում մեճերից: Ծնողներս

միշտ ասում են, որ մեր երկրի խաղաղութեամբ եւ այսօր-
ւան կեանքով մենք պարտական ենք մեր սուրբ նահատակներին: Եւ
մենք՝ երեխաներս, պարտաւոր ենք մեր սովորելով եւ լաւ արարք-
ներով կենդանի պահել նրանց յիշատակը:

Երեւի դա է պատճառը, որ ես ձգտում եմ չխախտել իմ նշանա-
բանը՝ այսօրուան գործը վաղուան չթողնել: Բոլոր երեխաների նման
ես էլ եմ սիրում խաղալ բակում, սահնակով սահել եւ ծնեմարդ
պատրաստել: Սակայն դրանց հետ մէկտեղ ես իմ օրուան անելիքը
չեմ մոռանում: Բիմա ես սովորում եմ Երդ դասարանում: Յաճախում
եմ երաժշտական դպրոց եւ շախմատի խմբակ: Սովորում եմ գերա-
կանց գնահատականներով:

Արթնանում եմ վաղ առաւօտեան: Մի քիչ ճանրաբեռնուած եմ իմ
օրերը, սակայն ես դա չեմ պզուտ: Դա ինձ համար դարձել է սովոր-
ական: Իմ իւրաքանչիւր օրը մի աստղ է: Եւ աստղերը սնունդ ու
մեճանում են իմ գիտելիքների ու լաւ գործերի շնորհիւ:

(Ծար.ը՝ էջ 7)

ՖՐԱՆՍԱ, Բարգէն, 12 տարեկան


Ամէն իմ տարիքս ունեցող ֆրանսացի աշակերտներու նման կ'եր-
թամ երկրորդական վարժարան եւ Յրդ դասարանի աշակերտ եմ:
Բայց իմ օրս չի վերջանար ժամը 4:00ին: Ամէն օր վարժարանէն
ետք ուղղակի կ'երթամ աւազան, ուր 1 ժամ եւ 30 վայրկեան կը
լողամ: Գիշերը ժամը 6:30ին տուն կը մտնեմ, կ'ընթրեմ եւ յետոյ
դասերս կ'ընեմ:

Ամէն ճաբաթ առտու կապոյտ Ռաչի հայկական դպրոցը կ'երթամ,
որպէսզի հայերէն գրել եւ կարդալ սորվիմ:

Երբեմն ճաբաթ կամ կիրակի, մրցումներու կը մասնակցիմ: Բին-
գերորդ տարին է, որ կը մասնակցիմ մրցումներու: 1999էն մինչեւ
2003 ախոյեան եղած եմ զանազան մրցումներու:

Արձակուրդներուն բոլոր ընկերներս 15 օր ունիմ, իսկ ես մէկ

(Ծար.ը՝ էջ 7)





ՌՈՒՑՈՒՅՑ

ԻՐԱՔԻ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՍ

Իրաքի դեմ Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ պատերազմը սկսաւ 20 Մարտին: Պատերազմին 21րդ օրը՝ (9 Ապրիլ) դաշնակից ուժերը մտան Պաղտատ: Անոնք մինչ այդ գրաւած էին իրաքեան այլ քաղաքներ եւ զօրաւոր կերպով ռմբակոծած էին մայրաքաղաքը:

Բուժքերտն պատճառով սպաննուեցան եւ վիրաւորուեցան մեծ թիւով իրաքցիներ, ամերիկացի ու բրիտանացի զինուորներ եւ լրագրողներ:

Պատերազմէն առաջ ամերիկացիներուն ու բրիտանացիներուն մտահոգութիւնը Սատտամին տապալումը, հաւաքական ոչնչացումի վէճքերու փծացումը եւ իրաքեան նոր կառավարութեան կազմութիւնն էր: Սակայն անոնք հիմա պահած են քարիւղի հորերու օգտագործումով, իրաքցիներու օժանդակութիւն բաժնելով եւ տնտեսական շահերով:

Թէեւ պատկերասփիւռի կայաններ ցոյց կու տան Սատտամին տապալումով ուրախացող փոքր թիւով իրաքցիներ, սակայն նոյնիսկ եթէ իրաքցիները ուրախանան Սատտամին տապալումով, ընդունելի չէ իրաքեան հողին վրայ օտար ուժերու ներկայութիւնը:



ՄԱՔՐՈՒ ՄԻՋԱԿԱՅՐ՝ ԱՌՈՂՋ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԱՄԱՐ

1950էն ի վեր 7 Ապրիլը եղած է Բամաշխարհային Առողջութեան Օրը: Այդ օր տարբեր երկիրներ կ'աշխատին միասին լուծում գտնել մարդոց առողջութեան հարցերէն մէկուն կամ միւսին մասին:

Այս տարի Առողջութեան Բամաշխարհային Օրը նուիրուած էր մանուկներու առողջ միջավայրի մէջ ապրելուն: Ներկայիս աշխարհի մէջ ամէն տարի հինգ միլիոն մանուկներ կը հիւանդանան, պարզապէս՝ որովհետեւ անոնք մաքուր ու առողջ միջավայրի մէջ չեն ապրիր:

Աղտոտ ջուրը, ապականաձ օդը եւ տնային արկածները պատճառներ են մանուկներու հիւանդութեան:

Առողջութեան Բամաշխարհային Օրուան առիթով բազմաթիւ երկիրներ որոշեցին մանուկներուն տալ ապրելու աւելի մաքուր միջավայր: Անոնց որոշումներէն մէկն է հանրային ու մանուկներ գտնուած վայրերու մէջ արգիլել ծխելը, որովհետեւ մեծ թիւով մանուկներ կը հիւանդանան նաեւ մեծերուն ծխելուն պատճառով:



ՄԱՌԱՅՈՒ ԲԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԲԱՄԱՑԱՐԱԿ՝ ՍԱՐՍ

Մարտի վերջերուն Չինաստանի հարաւը յայտնուեցաւ շնչառական մահացու հիւանդութեան մը համաճարակը, որ սկսած էր անցեալ Նոյեմբերի վերջերուն: «Շնչառական Ծանրակշիռ Սուր Սէնտրոն» (ՍԱՐՍ) անունով այս ժահրը թէեւ ամէնէն շատ տարածուած է Ասիոյ արեւելքը, սակայն ան սկսած է յայտնուիլ նաեւ Բուսիոյ, Միացեալ Նահանգներու եւ աշխարհի այլ երկիրներու մէջ:

Մինչեւ հիմա ՍԱՐՍի պատճառով մահացած է շուրջ 200 հոգի, իսկ հիւանդութեամբ վարակուածներուն թիւը հասած է հազարներու:

Այս փոխանցիկ հիւանդութիւնը թոքատապի տեսակ մըն է: Բարբը այն է, թէ տակաւին գիտնականներ գտած չեն այս մահացու հիւանդութեան ժահրին տեսակը, որպէսզի կարենան անոր դէմ դեղեր պատրաստել:

Իսկ մինչ այդ, ինչպէս նկարը ցոյց կու տայ, արեւելեան Ասիոյ մէջ մարդիկ սկսած են ծածկել իրենց քիթն ու բերանը՝ պաշտպանուելու համար շունչի միջոցով տարածուող ՍԱՐՍէն:

23 ԱՊՐԻԼԻՆ ԳԻՐՔ ՄԸ ՆՈՒԻՐԵՆՔ ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

23 Ապրիլը եՈՒՆԵՍԿՕի կողմէ նշանակուած է Բամաշխարհային Գիրքի Օր: Աշխարհի տարածքին այդ օր ջանք կը տարուի ընթերցանութիւնը եւ գիրքերու հրատարակութիւնը տարածելու համար:

23 Ապրիլին միջազգային բարեսիրական կազմակերպութիւններ հազարաւոր գիրքեր կը նուիրեն աղքատ երկիրներու գրադարաններուն եւ դպրոցներուն:

Իսկ նոյն օրը Սպանիոյ մէջ կը նշուի նաեւ Ս. Գէորգի տօնը: Մարդիկ իրարու կը նուիրեն վարդ մը եւ գիրք մը:

Ինչպէս չէ, մենք ալ հետեւինք այդ գեղեցիկ սովորութեան եւ 23 Ապրիլին մեր ընկերներուն նուիրենք գիրք մը:

■ Լիբանանի մէջ եւս Ապրիլին տեղի կ'ունենան գիրքը տարածելու ձեռնարկներ:

-12-13 Ապրիլին Պէրուի «Սայընս Միւլիըմ ֆոր չըւտրընի»ի մէջ տեղի ունեցաւ գիրք կարդալու արշաւ մը: Մանուկները իրենց ուկաճին չափ կարդացին արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն գիրքեր:

-12-26 Ապրիլին տեղի կ'ունենայ ընթերցանութեան փառատօն մը: «Արշ տը Նոէ» գրադարանին մէջ մանուկները կրնան կարդալ փրենք հետաքրքրող նիւթերով գիրքեր: Նաեւ կան հեքիաթներ լսելու, պատմելու եւ վանոնք թատրոնով ներկայացնելու ժամեր:



Կենդանի

ՈՒՇԻՄ ԴՔՓԻՆՆԵՐԸ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾԻՔ

Իրաքի վրայ յարձակող ուժերը պատերազմի ընթացքին օգտագործեցին դիֆինսիվ իրոն խելացուֆունը եւ ընկերային «բնաւորութիւն»ը: Դիֆինսներուն մարմիններուն վրայ դրուեցան նկարելու գործիքներ, որոնց միջոցով անոնք գտան ճովուն տակ պահուած ռումբերը: Պատերազմի համար դիֆինսներու օգտագործումը պատճառ դարձաւ, որ անասուններու պաշտպան միութիւններ դժգոհին:

Դիֆինսները ծանօթ են իբրեւ ծկուն անասուններ: Անոնք շատ արագ կը լողան եւ կրնան օդին մէջ զտակել ու դառնալ: Դիֆինսներու մարմնը սկսած է 1930ական թուականներուն, Միացեալ Նահանգներու մէջ: Անոնք ժամանակի ընթացքին դարձան ժապաւէններու, խաղերու եւ կենդանաբանական պարտէլներու աւազաններուն հերոսները:

Դիֆինսները կրնան հանել տարբեր տեսակի ձայներ ու սուլոցներ: Անոնց ձայները շատ բան կ'ըսեն իրենց ուրախ կամ տխուր վիճակին մասին:

Նաւաստիներու համար դիֆինսը բախտաբեր անասուն մըն է: Անոնք միշտ ներկայ եղած են պատմութիւններու ու առասպելներու մէջ: Դիֆինսներու նկարը տեղ գտած է մետաղէ դրամներու եւ դրոշմաթուղթերու վրայ:

Իսկ յունական դիցաբանութեան համաձայն, դիֆինսները կ'օգնէին նեղութեան մէջ եղող դպրոցականներուն ու երիտասարդ աղջիկներուն:

- Ընտանիք.- ստնաւորներ
- Բնակավայր.- վանապան կլիմաներու աղի եւ անուշ ջուրերու մէջ
- Տարիք.- 20-25 տարեկան. կարգ մը տեսակներ կ'ապրին մինչեւ 50 տարեկան
- Ճաշացուցակ.- ծուկեր եւ մելանածուկ



ՍԻՆՏԵՆՏԵՆ

«ՕՍՔԱՐ»ՆԵՐՈՒ 75ՐԴ ԲԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Ժապաւէններու ամէնէն կարեւոր մրցանակներէն «Օսքար»ներու հանդիսութիւնը տեղի ունեցաւ 23 Մարտին: Ամէն տարի մեծ շուքով տրուող «Օսքար»ները այս տարի իրենց 75րդ տարեդարձը տօնեցին պատերազմի մթնոլորտի մէջ: Մրցանակ առնող դերասաններէն ու բեմադրիչներէն շատեր յիշեցին Իրաքի պատերազմը եւ մաղթեցին, որ ան շուտով վերջ գտնէ:

Կը ներկայացնենք 75րդ «Օսքար»ներուն արդիւնքներէն մաս մը.

- Լաւագոյն ժապաւէն՝ «Ծիքակօ»
- Լաւագոյն գլխաւոր դերասան՝ Էյտրիըն Պրոտնի («Տը փիանիսթ»)
- Լաւագոյն գլխաւոր դերասանուհի՝ Նիքոլ Քիտմըն («Տը աուլըրզ»)
- Լաւագոյն բեմադրիչ՝ Ռոման Փոլանսքի («Տը փիանիսթ»)
- Լաւագոյն կենդանի գծանկար՝ «Սփիրիթըտ ըուէյ»
- Լաւագոյն երգ՝ «Լուկ եուրսելֆ», Էմինէմ («Յ մայլ»)

...

«ԾԱՆԿԸՆ ՊՈՒՔ 2»

Այս օրերուն լիբանանեան շարժապատկերի սրահներուն մէջ կը զուգահրոյս մանուկներու շատ սիրելի Մոկլիին պատմութեան շարունակութիւնը: Ձեզմէ շատեր դիտած ու սիրած են Տիպնիի «Ծանկըլ պուք» կենդանի գծանկարը: Ահա՛ պատրաստուած է «Ծանկըլ պուք 2»ը: Այս կենդանի գծանկարին մէջ Մոկլի կը կարօտնայ իր հին տունը՝ անտառը եւ պտոյտի համար կը վերադառնայ իր հին անասուն ընկերներուն մօտ: Սակայն անոր ընկերուհին՝ Ծանթի կը հետեւի Մոկլիին եւ կը սկսին անտառին մէջ արկածախնդրութիւնները: Անտառին մէջ Մոկլիին կը սպասեն անոր հին թշնամին՝ Ծարխան վագրը եւ մտերիմ բարեկամը՝ Պալու արջը:

ԱՍՏՊԵՐՈՒ ԱԾՌԱՐԻՔ

● «Մէյտ ին Մանհաթան» հերոսուհին՝ Ճէնիֆըր Լոփէյ եւ «Ծիքակօ» հերոսը՝ Ռիչըրտ Կիր, պիտի ըլլան դերասանները «Ծէլ Ուի Տէնս» ժապաւէնին, որ ծափոնական ժապաւէնի մը վերարտադրութիւնն է:

«Ծէլ Ուի Տէնս»ին մէջ մենք պիտի տեսնենք, թէ ինչպէս վրադաճ մարդու մը կեանքը իրար պիտի անցնի, երբ ան սիրահարի պարի ուսուցչուհիի մը: Բնտեսաբար ան պիտի արձանագրուի այդ պարի դպրոցը:

Այս ժապաւէնին նկարահանումը պիտի սկսի Յունիսին:

● Իր յաջորդ ձայնապնակին՝ «Ամերիքըն լայֆ»ի մէջ

Մատոնա երգ մը պիտի նուիրէ իր մօր: «Օն մատըր էնտ ֆատըր» երգը Մատոնայի գրած երգերէն ամէնէն անձնականն է: Այս ձայնապնակին տասնմէկ երգերուն մեծ մասը կը խօսի երգչուհիին ամուսինին՝ Կայ Ռիչիի սիրոյ մասին:

● Ժապաւէններու մէջ ընդհանրապէս դերասաններէ եւ մանաւանդ դերասանուհիներէ կը սպասուի աւելի գեղեցիկ եւ երիտասարդ երեւիլ: Այդպէս չէ «Տը աուլըրզ» ժապաւէնին մէջ դեր ստանձնած Նիքոլ Քիտմընին պարագան, որ կը մարմնաւորէ անգլիացի վրրճիմիա Վուլֆի կերպարը: Այս ժապաւէնին մէջ դերասանուհիին դիմագիծը ամ-

բողջութեամբ փոխուած է արուեստական մեծ քիթին պատճառով: Ան շատ սիրած է այս քիթը, եւ ըսած է, որ քիթի փոփոխութեան առաջարկը ընդունիլը քաջութիւն չէ, որովհետեւ շեշտը կը դնէ դերասանութեան վրայ եւ ո՛չ թէ գեղեցիկ արտաքինին:

Ըստ կարգ մը աղբիւրներու, Քիտմըն «Օսքար»ի արժանացած է, որովհետեւ լաւ դերասանութեան կողքին համաձայնած է կրել արուեստական քիթը:

«Ֆրիտա» ժապաւէնին մէջ իր դիմագիծը փոխելու համաձայնած է նաեւ Ճագու մով լիբանանցի դերասանուհի Սալմա Բայթը: Ժապաւէնին հերոսուհին՝ մեքսիքացի գեղանկարիչ Ֆրիտա Քահլոյի նմանելու համար ան իր դէմքին վրայ կրած է իրարու փակած սեւ եւ հաստ յօնք:

Ձեր գրութիւնները կամ նախաձեռնող կրկնաբ ուղարկել՝ bezdig_mezdig@hotmail.com կամ յստակօրէն՝ «ՊՁՏԻԿ-ԱՁՏԻԿ»ի խմբագրութեան, «ԱՊՐԻԼ», «Ճապարկեան» կեդրոն:




ԺԱՆՈՒՑ


ԽՆՉ ԿԸ ԱՏԱԾԵՍ .

10-15 բառերով կարճիբղ տո՛ւր հետեւեալ նիւթին մասին: Պատասխանները հասցնել «ԱԶԴԱԿ» ի խմբագրատուն մինչեւ հինգշաբթի, 8 Մայիս 2003:

համաձայն ես, որ անասունները օգտագործուին պատերազմի ատեն:



Կրնա՞ս գտնել տախտակէն ինկաճ կտորը:



Կրնա՞ս գտնել որդին համապատասխանող շուրը:

ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ» ի ճարաթ, 19 Ապրիլ 2003 ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 12Ի ԾԱՌՈՂԸ

հարցարան թիւ 12 ջահողը ՍԵՐՈՒԺ ՔԵՇԻՇԵԱՆ (12 տարեկան «հայ կաթողիկէ Սերոպեան» էն) շահեցաւ անցեալ ամսուան մրցումը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ» էն, «Ճաղպոյեան» կեդրոն:



Որ ինքնաշարժը պիտի հասնի կայարան, գիտնալով, որ իւրաքանչիւր ինքնաշարժ 0,5 լիթր վառելանիւթ կը սպառէ ամէն տուփիկի:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 13

- 1.- Ով է հեղինակը «Խօսք իմ որդուն» բանաստեղծութեան:-----
- 2.- Երբ լոյս տեսաւ «Պլտիկ-Մպտիկ» ի առաջին թիւը:-----
- 3.- Ծաղկապարդի մոմերն ու ծիւղերը ինչո՞ւ տուն կը տարուին:-----

- Ամսուան հարցումին կրնան մասնակցիլ 6 էն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ» ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:
- Անուն – Մականուն -----
 Վարժարան -----
 Ծննդեան թուական -----
 Բեռաձայնի թիւ -----



ՃՈՂԱՍՄԻ

ՌԿ Ե ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Ամանուկներու համար բազմաթիւ գողտրիկ բանաստեղծութիւններ գրած բանաստեղծուհի մըն է Սիլվա Կապուտիկեան: Ան ծնած է ու կ'ապրի Երեւան, հայաստան: Բանաստեղծուհին ունի նաեւ բանաստեղծութիւններու բազմաթիւ հատորներ, ինչպէս՝ «Օրերի հետ», «Բարի երթ», «Արտքայ Կրոյց» եւ այլն:

Անոր ամէնէն նշանաւոր բանաստեղծութիւններէն է «Խօսք իմ որդուն»ը: Կարծէք բանաստեղծուհին բոլոր հայ ամանուկները կը նկատէ իր վաւակները եւ



վանոնք կը խրատէ չմոռնալ մեր մայրենի լեզուն՝ հայերէնը:

ԹԹԵՆԻՍ

Կանաչում է օրէցօր
Մեր թթենին մեղրածոր:

Թութը հասնում, քաղցրանում:

Տերեւները մեծանում,

Թութը՝ ինձ ու Արամին,
Տերեւները՝ շերամին...

ՂԱՐԱԲԱՂ, Լեւոն, 10 տարեկան

(Ճարունակուած՝ Յրդ էջէն)

Եթէ ժամանակից շուտ բաց թողնեմ աստղերս կամ վատ սնեմ, ապագայում նրանք կը կորչեն կեանքի տիեզերքում: Իսկ մենք՝ արողներս, պարտաւոր ենք ապրել ո՛չ միայն մեր, այլեւ մեր զոհուած հերոսների փոխարէն: Ինձ այդ մասին չեն յիշեցնում, դա կնքուած է մեր աչքերում, մեր սրտերում:

Իմ կեանքի օրերը ե՛ւ նման են, ե՛ւ նման չեն: Օրը սկսում է դպրոցով, յետոյ՝ տուն, երաժշտական դպրոց, մարզական դպրոց, տուն՝ դասեր: Բայց միեւնոյն ժամանակ ամէն մի օրը տարբեր է: Ամէն օր քիչ - քիչ աւելացնում եմ իմ գիտելիքները, մեծանում ու հասունանում: Սիրում եմ օգնել ընկերներիս, երբ նրանք դասերն են պատրաստում: Մի մասին հեռախօսով եմ օգնում, միւսներին՝ դասարանում կամ մեր տանը: Դասերս պատրաստելիս, երբ մի փոքր հանգստանալ եմ ուզում, դաշնամուր եմ նուագում կամ պարզապէս՝ խենթութիւններ անում: Իսկ երբ ուզում եմ մայրիկս մի փոքր մոռանայ իր ամէնօրեայ հոգսերը, նրա համար նուագում եմ Պեթրոսի «Էլիպէին» կամ էլ սիրած երգը: Օգնում եմ նաեւ փոքր քոյրիկիս: Բնտեսում եմ, որ նա ծիշդ նուագի: Երբեմն տրտնջում եմ՝ շատ դասեր են յանձնարարում: Բայց միեւնոյն է, երբ ձեռքս եմ վերցնում դասագրքերս, կենտրոնանում եմ եւ արագ սովորում: Երեկոյեան ժամը 7:00ին դասերս արդէն պատրաստած եմ լինում: Եթէ հեռուտայոյցով հետաքրքիր հաղորդում է լինում դիտում եմ, եթէ ոչ՝ շախմատ խաղում եւ շախմատային խնդիրներ լուծում:


Ժամը 9:30ին պառկում եմ քնելու, որ թարմացած եւ նոր ուժով դիմաւորեմ յաջորդ օրը: Ես երբեք չեմ մոռանում բարի գիշեր մաղթել իմ ընտանիքի անդամներին եւ կրկնել մանկան թոթովանքս: Անուշ քուն եւ բարի եգաներ (երազներ):

ԽՕՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Այս գարնան հետ, այս ճաղկունքի,
Այս թռչնակի, այս առուակի,
Բնտն այս երգի ու վարթօնքի
Բացուեց լեզուն իմ մանկիկի:
Ու թոթովեց բառ մի անգին
Բայկեան լեզուից մեր սրբազան,
Ասես մասունք հաղորդութեան
Դիպաւ մանկանս շրթունքին:
- Լսի՛ր որդի՛ս, պատգամ որպէս
Սիրող քո մօր խօսքը սրտանց,
Այսօրուանից յանձնում եմ քեզ
Բայց լեզուն հապարազանձ:
Կտրել է նա, հանց աստղալոյս,
Երկինքները ժամանակի,
Ճառաչել է խռովայոյ՜
Սլացքի հետ հայկեան նետի,
Եւ Մերոպի սուրբ հանձարով
Դարձել է գիր ու մագաղաթ
Դարձել է յո՛յս, դարձել դրօշ,
Պահել երթը մեր՝ անաղարտ:
Նրանով է մրմնջացել
Բայ պանդուխտը վերքն իր սրտի,
Նրանով է որոտացել

Կռուի երգն իմ ժողովրդի,
Նրանով է մայրս ջահել
Ինձ օրօրոց դրել մի օր,
Բիմա եկել, քեզ է հասել,
Նրա կարկաչը դարաւոր...
Բա՛յ շուրթերդ, խօսիր, անգին,
Ժիր դայլայլիր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա՛ քո շուրթերին
Մեր ալեհեր հայոց լեզուն...
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ
Արարատի սուրբ ճիւղի պէս,
Պահիր նրան սրտիդ մօտիկ
Քո պապերի աճիւնի պէս,
Ու ոտիս վարկիցը սեւ
Դու պաշտպանիր կրծքով նրան,
Ինչպէս մօրդ կը պաշտպանես,
Թէ սուր քաշեն մօրդ վրայ:
Ու տե՛ս, որդիս, ո՛ր էլ լինես
Այս լուսնի տակ ո՛ր էլ գնաս,
Թէ մօրդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն չմոռանա՛ս...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ



ՖՐԱՆՍԱ, Բարգէն, 12 տարեկան

(Ճարունակուած՝ Յրդ էջէն)

Չաբաթ, որովհետեւ մէկ շաբաթ լողալու փորձեր կ'ունենամ: Փորձերը առտու ժամը 10:00ին կը սկսին եւ գիշերը ժամը 6:30ին կը վերջանան: Բայց երբեք չեմ դժգոհիր, որովհետեւ նպատակս էր մասնակցիլ ֆրանսական լողալու ախոյեանութեան եւ հասայ իմ նպատակիս: Մայիս 31ին եւ Յունիս 1ին Նանսի քաղաքին մէջ տեղի պիտի ունենայ ֆրանսական լողալու ախոյեանութիւնը եւ ես ալ պիտի մասնակցիմ:

Իսկ եղբայրս՝ Բուբէն, որ 9 տարեկան է եւ 4րդ դասարանի աշակերտ, հիւկպի կը խաղայ: Ամէն երեքշաբթի դպրոցէն ետք երկու ժամ կը մարզուի եւ ճաբաթ կէսօրէն ետքերը խաղ կ'ունենայ:

Ամէն ջանքս պիտի թափեմ, որ մրցումին առաջիններուն մէջ ըլլամ. եթէ չըլլամ, վնաս չունի, կարելորդ մասնակցիլս է: Յետոյ պէտք է աւելիով աշխատիմ, որպէսզի հասնիմ երկրորդ նպատակիս՝ մասնակցիլ Ողիմպիական խաղերուն: Բայց անշուշտ առանց մոռնալու ուսումս, որ աւելի կարելորդ է:



ՊՊՈՑԱԿԱՆ

ՄԻՋ -

Դասած է Ջատիկը

Դասած է Ջատիկը,
Բերած է հավիթը
եւ հավիթի խաղերը:

Անին կը պարտուի, Բամոն
կը յաղթէ.

Իսկ Սօսիկն ալ ուրախ-ուրախ
կ'երգէ.

Սանանն ալ ճառը կը վարդարէ:
Դալար Պոյաճեան,
Դ1 դասարան,

Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան



Վարդ Մանեան,
Ձ. դասարան, Յառաջ
վարժարան



Լուսի Ծառուկեան
Ե. դասարան,
Ե. Մանուկեան վարժարան

«ՄԵԾ ՄԱՅՐԱ»

Մեծ մայրս կը կոչուի Ազնի Չաքարեան: Ան մօտ եօթանասուն-հինգ տարեկան էր, երբ մեռաւ: Ան կ'ըսէր, թէ 60 տարեկան էր:

Մապերը սեւ եւ կարծ էին: Աչքերը պստիկ եւ սեւ էին: Բերանը եւ քիթը պստիկ էին: Քիչ մըն ալ գէր էր:

Ան ձեր ու բարի կին մըն էր: Ան մեզ կը սիրէր ամէն բանէ աւելի: Ես շատ լաւ կը յիշեմ անոր տեսքը: Կը յիշեմ, թէ ինչպէս ամէն օր զիս գիրկը առնելով շաքար եւ անուշեղէն կու տար: Ան ինձի «Բայր մեր»ը սորվեցուց: Մեծ մօրս հետ կ'աղօթէի իմ թոթով լեզուովս: Ինձի կու տար պտուղ, որ հայրս իրեն տուած էր:

Մեծ մայրս մեզի կը պատմէր, թէ ինչպէս իր մօրը հետ փախած են թուրքերէն եւ հասած են Սուրիա, ապա՝ Լիբանան: Կը պատմէր, թէ ինչպէս ճամբուն վրայ չարչարուեցան եւ ինչպէս իր հայրը մեռաւ թուրքերուն ձեռքով: Կը պատմէր մեզի հեքիաթներ, որ իրեն մեծ մայրը պատմած էր: Կը պատմէր իր փորձառութիւններուն մասին:

Երբ մեռաւ, ես վեց տարեկան էի:

Ես միշտ կը յիշեմ զինք եւ իրեն համար կ'աղօթեմ:

ՄԱՐԻ ԿՈՐՈՅԵԱՆ

Ազգ. Արգարեան վարժարան

Ձ. դասարան

Բօրս մեծ հայրը

Բօրս մեծ հայրը ինչ տարեկանին թուրքի մը տան մէջ հովիւ էր եւ տարիներով հոն աշխատած էր: Երբ ջարդը պատահած է, մեծ հայրս տուն երթալով տեսած է մօրը եւ եղբօրը մահը: Ան անմիջապէս վերադարձած է աշխատանքի վայրը եւ պահուելու տեղ տնայնապէս մէջ պահուելով: Այդպէս օրեր անցած են... եւ իր տէրը խղճալով՝ ըսած է մեծ հօրս. «Ես քեզի պիտի օգնեմ, որ փախչիս»: Օր մը առաւօտ կանուխ ան մեծ հայրս գորգի մէջ փաթեց եւ վայն հասցուցած է մինչեւ շոգեկառքի կայարան եւ քանի մը դուրուշ տալով՝ վայն դրկած է:

Այսպիսով, միայն հայրս ապատած է այս ջարդէն եւ եկած է Ժպլի որբանոցը: Բոն մեծնալէն ետք ամուսնացած է եւ հաստատուած է Լիբանան:

Լեւոն Գայապալեան, Ձ1 դասարան,
Մելանթոն եւ Բայկ Արսլանեան ճեմարան



Անդո Չարեան, Ե. դասարան, Ե. Մանուկեան վարժարան

★ ՈՌԵԱԴՈՒԹԻՒՆ ★

Բոլոր այն աշակերտները, որոնք կը փափաքին գճագրութիւններ դրկել «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»ին, որպէսզի կարելի ըլլայ նկարը ամբողջութեամբ արտատպել, թող հաճին նկատի ունենալ առաւելագոյնը հետեւեալ չափը.

29.5 cm x 21 cm: